

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՆՈՒԿ ԱՔԵՂՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Սեպտեմբերի 24-ին և 25-ին Հայկական ՍՍՌԻ Գիտությունների ակադեմիայի Հասարակական բաժանմունքի նիստերի դահլիճում, Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի նախաձեռնությամբ տեղի ունեցավ գիտական սեսիա՝ նվիրված խոշորագույն հայագետ Մանուկ Աբեղյանի մահվան 15-ամյակին:

Սեսիան ընդարձակ ներածականով բացեց Գրականության ինստիտուտի Հայ ժողովրդական բանահյուսության սեկտորի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Արամ Ղանալանյանը:

— Անցնող տարիները չեն աղոտում և չեն էլ կարող աղոտել մեծ գիտնականի հիշատակը, — ասում է Ա. Ղանալանյանը, — որովհետև այդ հիշատակը կապված է նրա թողած ծանրակշիռ գիտական ժառանգության հետ, մի ժառանգություն, որն այնքան շատ բան ունի իր մեջ ուսանելի և օգտակար:

Համառոտակի վեր հանելով ու արժեքավորելով անվանի հայագետի գիտական հարուստ ու բազմաբովանդակ ժառանգությունը, նա մասնավորապես նշում է հայ ժողովրդական բանահյուսության, հայոց լեզվի և հայ հին գրականության ընդգծված ներդրումը Մ. Աբեղյանի կատարած տեսական, բանասիրական ու տեքստաբանական աշխատանքների ու հետազոտությունների վիթխարի նշանակությունը ընդհանուր հայագիտության զարգացման գործում:

Ա. Ղանալանյանը այնուհետև մատնանշելով Աբեղյանի անվան ու ժառանգության նկատմամբ պարտիայի ու կառավարության ցուցաբերած մշտական հոգատարությունը, առաջ է քաշում այդ ժառանգության լիակատար ակադեմիական հրատարակության չափազանց անհրաժեշտ խնդիրը և գտնում, որ նրա անունը կրող ինստիտուտը պետք է նոր ուժով շարունակի ու զարգացնի Աբեղյանի գիտական արժեքավոր ավանդները, որոնք մեծապես կնպաստեն հայագիտության հետագա զարգացմանը:

Սեսիայի առաջին նիստի առաջին զեկուցումը նվիրված էր Մանուկ Աբեղյանի լեզվագիտական ժառանգության գնահատման ու արժեքավորման հարցին: Հայկական ՍՍՌԻ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ դոկտոր-պրոֆեսոր Էդվարդ Աղայանը բնութագրելով հայոց լեզվի ուսումնասիրման բնագավառում Մանուկ Աբեղյանի կատարած վիթխարի ժառանգությունները, մասնավորապես նշում է, որ Աբեղյանը «յուր ամբողջ գիտական գործունեության ընթացքում իր լեզվաբանական-քերականագիտական ուսումնասիրությունների մեջ մանրադնին քննության է ենթարկել հայերենի, մասնավորապես ժամանակակից հայերենի կառուցվածքը, նրա հնչյունաբանությունը, բառակազմությունը ու քերականությունը և աշխարհաբարի ուսումնասիրությունը իսկապես մի նոր, գիտական լայն շարժում էր»:

Համառոտակի ընդգծելով Աբեղյանի «Աշխարհաբարի քերականության», «Աշխարհաբարի շարահյուսության» և «Գրարարի համառոտ քերականության» գիտական ու մանկավարժական կարևոր արժանիքներն ու նշանակությունը,

պրոֆ. էդ. Աղայանը հանգամանորեն կանգ է առնում Աբեղյանի «Հայոց լեզվի տեսությունը» աշխատության վրա, որը լինելով մեծանուն գիտնականի քերականագիտական բազմամյա փորձի տեսական ընդհանրացումը, ընդհանուր դժերով գաղափար է տալիս նրա լեզվաբանական հայացքների և դավանած ուղղության գիտական արժեքի ու նշանակության մասին:

Նշելով, որ Աբեղյանը հետևել է անցյալ դարի երկրորդ կեսերին լայն տարածում գտած, այսպես կոչված երիտերականների ուսմունքին, որը խոշոր դեր է կատարել պատմական լեզվաբանության զարգացման գործում, պրոֆ. էդ. Աղայանը գնահատում ու արժեքավորում է այն նորն ու դրականը, որ մոծել է Մ. Աբեղյանը հայ լեզվաբանության պատմության մեջ լեզվի ծագման, զարգացման, կրած փոփոխությունների, բարբառների և միասնական ազգային լեզվի, ինչպես նաև ցեղակից լեզուների և նախալեզվի միմյանց նկատմամբ ունեցած պատմական փոխհարաբերությունների ու զարգացման ընդհանուր օրինաչափությունների վերաբերյալ:

Ընդհանրացնելով իր խոսքը Մանուկ Աբեղյանի լեզվաբանական ժառանգության մասին, զեկուցողը եզրակացնում է.

— Մանուկ Աբեղյանը ժամանակակից հայերենի ամենամեծ ուսումնասիրողն է եղել, և ինչպես չի կարելի հայոց լեզվի պատմության կամ հայ քարբանագիտության հարցերով զբաղվել առանց Հրաչյա Աճառյանի ուսումնասիրությունների յուրացման, այնպես էլ անկարելի է զբաղվել ժամանակակից հայերենի ուսումնասիրությամբ, առանց խորապես յուրացնելու Մանուկ Աբեղյանի լեզվաբանական ժառանգությունը, որ մեր գրական լեզվի դիտական ուսումնասիրության հաստատուն հիմքն է կազմում:

«Մանուկ Աբեղյանը գրական քննադատ» թեմայով զեկուցմամբ հանգես եկավ բանասիրական գիտությունների թեկնածու Սերգեյ Սարինյանը:

80—90-ական թվականներին, երբ հայ քննադատական մտքի պատմության մեջ ամբողջ ծավալով առաջ էր քաշվում գրական ստեղծագործությունների գեղարվեստական կատարելության և գեղարվեստի բազմակողմանի տեսության հարցերը, գրաքննադատության ասպարեզ է իջնում Մանուկ Աբեղյանը, որը յուրացրած լինելով եվրոպացի խոշորագույն գեղագետների առաջավոր դադափառները, տեսական հարուստ գիտելիքներով զինված մի նոր զարկ է տալիս հայ քննադատական մտքի առաջընթացին: Պնահատելով Աբեղյանի՝ իրեն գրական քննադատի հասարակական դիրքորոշումը, դավանած գրական ուղղությունն ու նախասիրությունները, Ս. Սարինյանը մասնավորապես նշում է, որ «Աբեղյանը ղեմավոր էր իր ամբողջ էության մեջ. հասարակական դիրքորոշմամբ նա կապվում է առաջավոր մտայնության հետ, նա ջատագովն էր գրական այն ուղղության, որը արտահայտում էր ժողովրդի հույզերն ու մտորումները, նրա երազանքը: Գրականության կենսունակության և նրա հասարակական կոչման տեսակետից Աբեղյանը չափազանց կարևոր էր համարում արդիականությունը, հասարակական տենդենցը»:

Աբեղյանը եղել է անցյալի մեր նշանավոր բանաստեղծների ու դրոդների՝ Բաֆիու, Դուրյանի, Հովհաննիսյանի, Թումանյանի, Մատուրյանի, Լեոի, Հակոբյանի և Հ. Պարոնյանի ստեղծագործությունների առաջին գնահատողներից ու արժեքավորողներից մեկը:

— Աբեղյան քննադատի դործունեությունը, — ասում է Ս. Սարինյանը, — ամբողջապես ուղղված է եղել հայրենի գրականության զարգացման նպա-

տակին: Նա ձգտում էր այն բանին, որ մեծանա հայ գրականության լսողը-կումը, այն գուրս դա տեղային սահմանափակությունից, ստանա համաժողովրդական լսողականություն, ու զրանով իսկ ելք գտնի դեպի համաշխարհային գրականության բարձունքը:

Այս միանգամայն վեհ ու ազնիվ նպատակից ելնելով էլ Արեղյանը հատուկ ուշադրություն է դարձրել գրական ստեղծագործությունների լեզվի կատարելության, տաղաչափական վարպետության, առանձին ժանրերի բնորոշ հատկանիշների, ձևի ու բովանդակության միասնության վրա, միաժամանակ դատապարտելով նմանակությունն ու էպիգոնությունը գեղարվեստական գրականության մեջ:

Այնուհետև զեկուցողը համառոտակի կանգ է առնում Արեղյանի «Գրական դպրոցներ» ծավալուն աշխատության վրա, այն փնտհատելով իրեն բուրրովին նոր երևույթ հայ գրաքննադատական մտքի պատմության մեջ:

Մասամբ չհամաձայնելով Արեղյանի՝ մասնավորապես հայ մի քանի բանաստեղծների ու գրական երևույթների նկատմամբ արտահայտած նախնական ոչ այնքան էլ իրավացի դնահատականների ու կարծիքների հետ, Ս. Սարինյանը եզրակացնում է, որ խոշոր հայագետը հետազայում չմնաց իր այդ տեսակետների վրա և իր ծանրակշիռ հետազոտությունների մեջ շատ բարձր արժեքավորեց մեր գրականությունն ու բանահյուսությունը:

Անհայի երկրորդ նիստում՝ «Մանուկ Արեղյանը և հայոց լեզվի տաղաչափությունը» թևալով զեկուցում մեր հանգես եկավ պրոֆ. Գ. Աբովը:

— Արեղյանն առաջինն էր մեր գրականության մեջ, — ասում է նա, — որ գիտականորեն առաջ քաշեց մեր բանաստեղծության հիմնական հարցերը, այդ թվում մեր տաղաչափության խնդիրները: Հակառակ գոյություն ունեցող սխալ ըմբռնումների, նա բազմաթիվ սխալներով ապացուցեց, որ մեր տաղաչափությունը ոչ թե վանկական, այլ վանկաշեշտային է. իսկ դա գալիս է խոր հնադարից և առանձնահատուկ է եղել հայ հին ու միջնադարյան բանաստեղծությանը: Սա խոշոր հայտնագործություն էր մեր տաղաչափության ասպարեզում, որի համար մենք շատ բան ենք պարտական Մանուկ Արեղյանին: Նա բազմակողմանիորեն վերլուծեց մեր վանկաշեշտային տաղաչափության բազմաթիվ ձևերը և միաժամանակ ապացուցեց, որ բացի վանկաշեշտային տաղաչափությունից, մեր լեզվին հատուկ են եղել թե շեշտային և թե ամանակային տաղաչափական սխեմաները: Արեղյանն առաջինն էր, որ խորապես ուսումնասիրեց մեր տաղաչափության հնչյունաբանությունը և բացահայտեց հնչյունանմանությունների, հանդիմությունների, բանաստեղծական տների կազմության և բազմաթիվ այլ խնդիրներ:

«Հայոց լեզվի տաղաչափությունը» աշխատությունը լինելով հայ պոեզիայի տաղաչափական բազմադարյան ձևերի մի ամբողջական ուսումնասիրություն, միաժամանակ բանաստեղծության հորինման օրենքների անսպառ հանրագիտարան է, որը խոշոր չափով նպաստել է սովետահայ պոեզիայի բազմադարյան ձևերի պարզացմանը: Զեկուցողը հատկապես նշում է, որ Արեղյանն իր մեծ էրուզիայով հայկական տաղաչափության ուսումնասիրության ասպարեզում ելել է ոչ միայն եվրոպական ու ռուսական տաղաչափական նորագույն գիտությունից, այլև մեր հնագույն հայ բանաստեղծների տեսությունից: Եվ այդ տմենի հիման վրա Արեղյանն ստեղծել է իր ինքնուրույն, նոր ու ճշմարիտ գի-

տական մեթոդը՝ հայոց լեզվի տաղաչափության ուսումնասիրման բնագավառում:

Զորրորդ զեկուցումը՝ «Մանուկ Արեղյանը որպես հայոց հին գրականության պատմաբան» թեմայով կարգաց բանասիրական գիտությունների թեկնածու Մայիս Ավդալբեգյանը: Զեկուցողը բավականաչափ բնութագրեց հայոց հին ու միջնադարյան գրականության ուսումնասիրության բնագավառում Արեղյանի կատարած վիթխարի աշխատանքը: Իր խոսքը մասնավորեցնելով Մ. Արեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» երկհատոր աշխատության վրա, նա ամենից առաջ մատնանշում է այն դժվարությունները, որոնք ծառացած էին հայ հին գրականության գիտական պատմություն ստեղծողի առաջ, և թե ինչպես Արեղյանը հաղթահարում է դրանք և ստեղծում հայ հին ու միջնադարյան գրականության ամբողջական պատմությունը:

Մ. Ավդալբեգյանը հիմնական գծերով ներկայացնում է այն նորն ու էականը, որ ներմուծեց հայագիտության մեջ Մ. Արեղյանը հայոց հին գրականության պատմությունը մշակելիս:

Այդ, ամենից առաջ, հայոց հին ու միջնադարյան գրականության պարբերացման (պերիոդիզացիա) ստեղծումն էր, որ Արեղյանը ձեռք է հասցրել ժողովրդի պատմության վրա, բխեցնելով նրա վարդապետական ամենաէական տենդենցներից, հակադրվելով իր նախորդների գրականության պարբերացման ոչ պատմական սկզբունքներին:

Այնուհետև ի տարբերություն իր նախորդների, Արեղյանը գրականության սպատմության նյութ է դարձրել ամենից առաջ բուն գեղարվեստական ստեղծագործությունները և ապա՝ այն կուլտուրական գրավոր հուշարձանները, որոնք բնույթով թեև գեղարվեստական գործեր չեն, բայց ունեն գրական-գեղարվեստական որոշակի արժեք, կամ էլ՝ ժողովրդի ընդհանուր մշակույթի մեջ կարևոր դեր են խաղացել, նպաստելով ընդհանուր գրական երևույթների բացահայտմանն ու ըմբռնմանը:

Զեկուցողը Մ. Արեղյանի հայոց հին գրականության պատմության կարևորագույն առավելություններից մեկն էլ համարում է այն, որ մեծ հայագետը մեր անցյալի գրականության ու ավանդական բանահյուսության մեջ դիտել է ու վերահանել հասարակական ու սոցիալական կյանքի այնպիսի երևույթներ, որոնք մինչ այդ ուսումնասիրության առարկա չեն դարձել գրականության պատմաբանների կողմից (առասպելների պատմահասարակական կորիզի, թոնդրակյան աղանդավորական շարժման սոցիալական շարժառիթների, միջնադարյան առականերում սոցիալական հարաբերությունների բացահայտում և այլն):

Արեղյանը հայոց հին գրականության պատմությունը քննելիս այն դիտել է ոչ թե իրրե մի մեկուսացած ու բացառիկ երևույթ, այլ կապել է համաշխարհային գրականության ընդհանուր շղթայի հետ և համարել նրա կարևոր ուղակներից մեկը: Զեկուցողը վերջում եզրակացնում է, որ «Արեղյանի հայոց հին գրականության պատմությունը իր նախորդը չունեցող գրականագիտական մի մոնումենտալ ստեղծագործություն է, որի վրա պիտի բարձրանա հայ հին գրականության մարքսիստական պատմությունը»:

Սեսիան ընթացավ գիտական բարձր մակարդակով, և կարգացած զեկուցումները լսվեցին մեծ ուշադրությամբ ու հետաքրքրությամբ:

Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ